

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԵՏՄԵԿԱՆ

ՀԻՆ ՀԱՅ ԵՐԳԻՉՆԵՐ



այլական հին գրականութեան վայր ի վերոյ ուսումնասիրութեան շնորհիւ շատ բան գեռեալ անյայտ է մնացել շատ բան էլ զիտմամբ մոռացութեան է տրուած, որովհետեւ գրականական ուսումնասիրութեան առաջնորդող սկզբունքները շատ տարբեր և գրականութեան նպատակից դուրս են եղել: Առանց այս տարօրինակ երեւոյթի մասին երկարաբանելու, հերիք է՝ եթէ ասենք, որ բուն գրականութիւնը, բանաստեղծութիւնը, մեր գրականութեան պատմութեամբ զբաղողներէ համար մի terra incognita է մնացել: Այս անհետկէութեան ակներեւ պատճառն այն է, որ մեր հին գրականութեան վերածնող ու լոյս աշխարհ հանող Մխիթարեանները թիւր հայեացք են ունեցել գրականութեան ուսումնասիրութեան մասին. նրանք լեզուի հնութիւնն ու մաքրութիւնն ընդունել են զուտ գրականութեան տեղ, ուստի և ձգտել են լոյս ընծայել և ուսումնասիրել մեր հին մատենադրութեան այն նշխարները, որոնք ծագմամբ հնագոյն են և լեզուով դասական: Ահա թէ ինչու համար ցարդ հրատարակուած են բազմաթիւ հատ ու կտոր և գրական արժէքից զուրկ երկեր հին հեղինակների, իսկ շատ զուտ գրականական գոհարներ աւելի նոր ժամանակներից և ոչ դասական լեզուով գրուած՝ մնացել են ձեռագրատներու մէջ:

Մեր գրականութեան ուսումնասիրութեան այս սխալ ընթացքի շնորհիւ՝ օտարներն ևս այնքան թիւր գաղափար կազմեցին մեր ազգի մասին, որ մեզ կոչեցին «ազգ առանց բանաստեղծութեան»:

Պէտք է սակայն խոստովանել, որ նոյն Մխիթարեաններն եղան առաջին նուազ իրենց սըխալ ընթացքն ըմբռնողն ու այդ սխալն ուղղել ջանացողն:

Մեր ստորին կոչուած գրականութեան շրջանից յայտնի հեղինակների մեծագոյն մասը բանաստեղծներ կամ աւելի ճիշդ ասելով՝ ժողովրդական երգիչներ են, որոնցից միմիայն շատերի անուններն են յայտնի մեր գրականութեան մէջ: Յիսուն տարի է միայն, որ մեր գրականութեան մէջ հետզհետէ և միմեանցից անկախ փորձեր են եղել ժողովելու և լոյս ընծայելու հին հայ երգիչների երգերն, սակայն գեռ ինչքան նիւթեր կան անյայտութեան մէջ: Արիստակէս վ. Տէվկանցի 1883 թ. հրատարակած «Հայերդ» ժողովածուի մէջ յիշատակուած են հարիւր երեք (103) անյայտ կամ սակաւ յայտնի բանաստեղծներ . . . :

Այս բանաստեղծները մի ամբողջ և տեական դպրոց են կազմել, որ դարերի ընթացքում ապրել է և գեռ ապրում է, սակայն որից տեղեկութիւն անգամ չ'ունի մեր արդի բանաստեղծութիւնն և բանաստեղծների ամբողջ խումբը:

Ազգային ստեղծագործութեան մէջ մեծ դեր է խաղում և ժառանգութիւնը, սակայն մեր դարու հայ բանաստեղծներից միայն հ. Ալիշանն է, որ ծանօթ է հին հայ երգիչների ստեղծագործութիւններին և երբեմն նուագում է նրանց եղանակները:

Եթէ կամենում ենք հայկական ստեղծագործող մաքի արգասիքներին ծանօթանալ, պէտք է լաւ ուսումնասիրենք մեր ազգային երգիչներին սկսած Ժ. դարուց մինչև մեր օրերը:

Այդ ուսումնասիրութիւնը շատ արդիւնաւետ կարող է լինել թէ մեր լեզուի հետազօթեան և թէ հայ ոգու ըմբռնման, թէ քնարերգութեան եղանակներին (օրինակ) ու տաղաչափութեան ծանօթանալու համար: Արդէն իսկ սկիզբն է դրուած այդ ուսումնասիրութեան պ. Կ. Կոստանեանցի «Միջնադարեան հայոց տաղերի ու ոտանաւորների նոր ժողովածուի» քննադատական հրատարակութիւնով:

Այսպիսի կարեւոր ուսումնասիրութեան օ-

ժանդակելու նպատակով մտադիր ենք այսուհետեւ «Արարատ»-ի էջերում լոյս ընծայել հայ երգիչների երգերից՝ որ մասամբ զանուգում են Մայր Աթոռիս հարուստ ձեռագրատանը:

Այս նուագ տպագրում ենք Էջմիածնի միաբան Պետրոս վ. Ղափանցու մի քանի ոտանաւորները՝ որ հանուած են ս. Էջմիածնի գրատան թիւ 680 ձեռագրից. որի նկարագրութիւնն ևս դնում ենք այստեղ առթից օգտուելով: Ղափանցու երգերից տպագրուած է մի «երգարան»¹ ՌՄԻԱ թուին (1877), որից երևի արտագրութիւն է այս ձեռագիրս, որովհետեւ ամբողջ գրութիւնը ջանացած է տպագրութեան նմանեցնել:

ՏԱՂԱՐԱՆ ՂԱՓԱՆՅՈՅ

54. ԹԵՐԹ 4. — ՄԵՏՈՒԹԻՒՆ 24. 4×17. 1 սմ. — ԳՐՈՒԹԻՒՆ. 47. 3×14 սմ. — ՏՈՂ. 25. — ՆԻՒԹ. հաստեւ կանաչ թուղթ. — ԿԼՁՄ. չունի. — ՀԱՆԳԻՍՈՒՄՆԵՔ. սկիզբն թերի, անմաքուր. սկզբում 9 թերթի ծակաւոր մասը կրճուած մկներէ, եւ 4. սմ. գրութիւնից պակաս. Առաջին թերթի ստորին լուսանցքի կէսը կտրուած է. վերջին 3 թերթերի լուսանցքները քրքրուած են: ԳԻՐ. — բոլորովին խռոր. վերնագրերը նոտր, մի քանի թղթակիր: Սկզբնագրերը երկամագիր. — ՆԿԱՐՔ. — եր. 54. Պատկեր Յովնանու Մկրտչի: — ԺԱՄԱՆԱԿ. անյայտ. եր. 55 ստորին լուսանցքում այլ մեքուրով «ի վայելումն տիրացու Յովնան փառակցովն. 1238. յունվարի 48 (1804) երևի գրութիւնն էլ շատ առաջ չէ այդ ժամանակից: ԳՐԻՉ ԵՒ ՏԵՂԻ. անյայտ: ՅԵՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ. բացի վերոյիշեալից ուրիշը չըկայ. — ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ. — համարի տակը դեղին թղթով մի փորրիկ գօտու վրայ գրուած է «Տաղարան Ղափանցոյ». — ԵՐԵՍԱՀԱՄԱՐ յետոյ զըրուած, սկսած 6. երեսից մինչեւ 65. սկզբից 3 երես եւ վերջից 3 երես թուահամար չունին:

Թուղթ 1—3. պէտք է ամփոփէին առաջին չորս տաղերը (Ա—Դ), որոնցից միայն Դ. տաղի վերնագիրն ու սկիզբը կան, իսկ միւսներէից մասեր միայն: Հաւանորէն Ա. և Բ. տաղերը բոլորովին չը կան, 2օրրորդ տաղի վերնագիրն է. «Վեպ զանձնէ, և Ազերս առ Տէր» (Դ), թերթի սկզբից 3 տող և վերջից 4 տող պակաս է:

1. Տես «Քնար Հայկ» յառաջարան եր. ԺԴ. № 27. եւ Մատենագրութիւն Հ. Գ. Զարք. եր. 175. Այս տպագրութիւնը հազուագիտ է շատ:

Թուղթ 4—21. Պարունակում են 37 տաղ, թուահամարով նշանակուած (1է): ահա վերնագիրները:

Ե. Զալէկոծութենէ հոգեոյս:

Զ. Սիրարորոք և ըղձալիր աղերսանք առ Թագուհին երկնից, և բարեխօսն ամենայն քրքիստունէից:

Է. Զցնծութենէ Լուսնահաւոյն:

Ը. Առ Տիրուհին եզական, նմանութեամբ զանազան:

Թ. Զպտղաբերութենէ բարի գործոց, և զփոյթ սպառեցմանէ նորին:

Ժ. Առ Հայրն ողորմութեան:

ԺԱ. Ի մուսն Գարնան՝ հրաւիրումն ինքութեան. և զարթչիլն ի քնոյ Լուսնահաւոյն:

ԺԲ. Առ պանծալին հրեշտակաց՝ սուրբ կոյսն Մարիամ:

ԺԳ. Ողբ Պիւլպիւլին՝ վասն բացման Վարդին:

ԺԴ. Դարձեալ ի Մայրն լուսոյ, և ապաւէնն յուսոյ:

ԺԵ. ԶՎարդէ իմանալոյ:

ԺԶ. Դարձեալ առ ազատիչ Մայրն գթութեան՝ ամէնօրհնեալ կոյսն Աստուածածին:

ԺԷ. ԶՎարդէ և զԼուսնահաւոյն, պարզ բանի:

ԺԸ. Ի ծնունդ ամենազօր Փրկչին տիեզերաց:

ԺԹ. Ի յԱնկա Պիւլպիւլին ձայն աւետման, որոց բանքն են, ի խորհուրդ Տեառն քարոզութեան:

Ի. Ազաղակ խորհրդաբար՝ առ բարձրեալն Աստուած ի Խաչին, վասն փրկութեան մարդկայնոյ ազգին:

ԺԱՆՕԹ. Այս տաղը մեակն է, որ հրատարակուած է «Հայերգի, մէջ եր. 80—81, սակայն մի քանի ընթերցուածների տարբերութեամբ եւ հինգ տող պակաս: Ահա այդ տարբերութիւններն:

• Հայերգ. եր. 82. տող 9. • հալէ • պէտք է լինի • հալէ • :

• Հայերգ. • երես 83. տող 10. • Յաւոցս երկիրս ոչ հանդարտի • :

2եռ. • Յասեւս երկիրս ոչ հանդարտի • :

83. եր. 13. տողից յետոյ • Հայերգի • մէջ պակաս է տողս, • արտասուաց գետք յաւացս յարեան • :

2եռագրի մէջ 8 տնից (32 տող) յետոյ իբրեւ վերնագիր գրուած է. • Դարձեալ ի նոյն միտ • :

• Հայերգ. • եր. 84. տող 6. յետոյ՝ պակաս է • Թագաւոր իմ եւ տէր իմ դու՝ վարդ վարդ • : նոյն երեսում տող 10 ից յետոյ պակաս է. • յայտմ անբարի մեծի դարի վարդ վարդ • : Դարձեալ նոյն երեսի վերայ տող 13. փոխանակ • աղաղակեմ • ծնողգիրս ունի • աղաղակաւ • : Այս տողից յետոյ • Հայերգ. — ում չը կան հետեւեալ երկու տողերս • : Ողորմելով յօգնութիւն հաս վարդ, վարդ:

Յանգիտ կորուստն յուրի անկեալ վարդ, վարդ • :

2եռագրի մէջ այս տաղը տնտեսալ է գրուած, իւրաքանչիւր տունն ունի 4 տող եւ ընդ ամէնը 15 տուն է:

Նախընթաց տողերը լրացնում են իւրաքանչիւր տան իմաստն, ուստի եւ վկայում են ձեռագրի քննարկի առաւել լաւ վիճելուն:

ԻԱ. Զայն Աւետեաց մեզ և ձեզ մեծ աւետիս: Քրիստոս յարեալ ի մեռելոց:

ԻԲ. Առ սուրբ Էջմիածին Մայրն Հաւատոյ, պարծանք Հայաստանեայց Եկեղեցւոյ:

ԻԳ. Գարձեալ առ Նոյն սուրբ Էջմիածին:

ԻԴ. Զհոգեւոր Գարնանէ, և զԳարոզութենէ սըրբոց Առաքելոց:

ԻԵ. ԶՍրբոյ Ամլորդւոյն՝ մեծի Մկրտչին Քրիստոսի: (Այս վերնագիրս կրկին անգամ է գրուած, մէկ անգամ տաղի ճակատին, մէկ էլ Յովհ. Մկրտչի պատկերի գլխին):

ԻԶ. Սուգ Լուսնահատոյն զՎարդէ, ի յերկար խօթութեան իւրում:

ԻԷ. Գարձեալ զՎարդէ, որ խորհրդածի զգերազանցութենէ շնորհացն Աստուծոյ, և ըզյապաղմանէ նորին:

ԻԸ. Լոց և խնդիր առ Տէր, թերեւ գտանել զկորուսեալ Առաքինութիւնս մեր:

ԻԹ. Զգարնանէ Բիւզանդիոյ. Որ խորհրդաբար ակնարկի առ քնակիչս նորին:

Լ. Գարձեալ զԱստանդնուպոլսոյ ի գէմս Վարդի և Պիւլպիւրին. Յորում զանազան նմանութիւնք մակայութեանց ստորագրին ներբողաբար: (Տես քնար Հայկական եր. 417—426)

ԼԱ. Զմտեղոց ընդ գուն Ապաշխարութեան՝ այլարանօրէն:

ԼԲ. ԶՔաղցրիկ թռչնոց Կաքաւուց:

ԼԳ. Զգացումն զՎարդէն, և իմացումն զկատարելութենէ Սիրոյն:

ԼԴ. Ի Հրճուանս սիրելեաց՝ Պատահեալ զբոսանաց. Յաւուր Համբարձման Տեառն՝ հարկեալ ասացուած:

ԼԵ. Առ ազգն իւր Սիրելի:

ԼԶ. Ողբ Կտակի Ուրբաթու Աւուր մեծի. որ ի բերանոյ Մօր Խաչեցելոյն Յիսուսի եղանակեալ ձայնիւ ասի (Տես Քնար Հայկական եր. 106—108):

ԼԷ. Երգ ի վերայ Գարնան և Դիտումն ի Յամենակեցոյց Տնօրէնութիւն և Յարութիւն Փրկչին մերոյ Քրիստոսի:

Վերջին 10 թղթերի վերայ գտնուած երգերի թուահամարները սկսուում են Ա. համարից:

Ա. — ԶՄարգասիրութենէ Բարձրելոյն:

Բ. ԶԳինաց և զգօրութենէ նորին:

Գ. ԶԱխից՝ այսինքն Հեծութեանց սրտի:

Դ. Խնդիր և աղաչանք՝ Բողոք և հառաչանք, Իրրու կցորդ առաջնոյն:

Ե. ԶՔամոզաց և զխոսվարկու անձանց. յորոց Տէր փրկեցէ զսիրելիսդ իմ:

Զ. Սակաւուկ ինչ Խրատ՝ առ անձն իւր ապիրատ, Սրան հետեւում է եր. 61ում վրիպակների մի ցուցակ, որ թուով 11 են, Այս ևս ապապացոյց է, որ մեր ձեռագիրը տպագիր օրինակից է արտադրուած:

Է. ԶԵօթնից մահացուաց մեզաց՝ յորոց և գերեցայ:

Ը. Վէճ ընդ անձն իմ:

Թ. Գանգատ զպատրանաց աշխարհի

Ժ. Զիրաւանց և զգատաստանաց:

ԺԱ. (ղ)Հաւաստութենէ և զանհաւաստութենէ մահու՝ և զպատրանաց աշխարհիս:

Վերջին տաղերիս վախճանում խրատական տողեր կան երբեմն, այս ԺԱ. տաղն ևս վերջանում է հետեւեալ տաղերով:

« Աւելին մատո՛ սրբոյ մըտք՝ խրատուց սորին: »

« Ապա թէ ո՛չ ի յուզոյ քոյ՝ փութով սորին: »

Այս տաղերի տակ կայ մի զարդագիծ, որով և աւարտում է ձեռագիրս:

Քնար Հայկականում և այլուր տպագրուած երգերի համեմատութիւնը թողնում ենք մի այլ նուագի. թերեւ յաջողի մեզ մինչև այդ ժամանակ և տպագիր օրինակ՝ ձեռք բերել:

Վափանեցու այս երգերը վկայում են նրա անպայման բանաստեղծական արժանիքի մասին, նրա երգածները վերնագիրներին նայելով թէպէտ և հոգեւոր երգեր են, սակայն իրենց բովանդակութիւնով մարմնաւոր բուն զգացումների արտայայտութիւն են, Վափանցու երգերը կարելի է համեմատել այն տաղանգաւոր հին նկարիչների գործերի հետ, որոնց նիւթերը մշտ Աստուածաշնչից են առնուած, սակայն իրենք արտայայտութիւն են նկարչի ժամանակի և կեանքի մարգկային կրքերի, Վափանեցին սկսւոյ երգի է, որ նա թէև այլաբանական քօղով է ծածկում, սակայն այդ քօղն այնքան թափանցիկ է, որ ամեն ոք կարող է գրա յետևը թագցուած զգացումը տեսնել, Վափանեցու երգերից գրեթէ կիսիցն աւելին նուիրուած է վարդի և պլպիւրի սիրոյն և սուրբ Աստուածածնին, որոնք ամէնն էլ սիրոյ երգեր են, Յաջող են Վափանցու և այն երգերը, որոնց մէջ մարդու տկարութիւնն ու աշխարհիս ունայնութիւնն է երգուում, մինչդեռ վերացական նիւթերի մասին նրա գրուածներն բոլորն ազդարարիկ են:

Վափանցու արժանաւորութիւններից մէկն էլ նրա իւր ժամանակի տաղաչափական արուեստի կատարելութիւնն է և լեզուի յստակութիւնը, սակայն այս ամէնն յատուկ օրինակներից աւելի լաւ կերևի:

1.

Ալեկոնոմիսնէ Հոգոյս: (Ե)

Աշխարհս է ահագին ծով լայնատարած.
Յորում ալեօք ծրփի անձն իմ արտալած.
Նաւարեկեալ տանջիմ՝ գերիս չարազգած.
Ողորմեա՛ ինձ Աստուած ողորմած գրեմած:

Ի կորըստեան շաւիղս չարին ընթացայ.
Եւ ի յառնել հոգմոց յոյժ սասանեցայ,
Հարեալ միշտ կոհակօք ես կործանեցայ.
Ողորմեա՛ . . .

Իչի ես երերմամբ ի խորս անդընդոց.
Եւ զիս պաշարեցին ըզրօսանք գետոց
Մերժեցայ յաւիտեան ի սուրբ աչաց քոց՝ ողորմ:

Սարգսցի զանուն քո ի դրանց դժոխոց.
Մի մերժեր զիս տէր ի սուրբ երեսաց քոց.
Խառնեա զիս սիրով քո ի թիւս արդարոց՝ ողորմ:

Մաշեցաւ ի ցաւոց անձն իմ ողբալի.
Եւ մեռեալ հոգի իմ՝ արդ ապականի.
Արի տէր ի խնդիր արի տէր արի՛ ողորմեա՛ . . .

Փութացաւ որսալոյ նախնի թշնամին.
Բիւր չարիք առ հասոյց քոյոյ պատկերին.
Ողբալով հառաչեմ առ քեզ ցաւագին՝ ողորմ:

Գոչէ միշտ ի վերայ իմ՝ ահեղագին.
Սատաղի վիշապն պին զանդընդային
Մաղթանօք զըշխոյի մօր քոյ միշտ կուսին
Ողորմեա՛ ինձ Աստուած՝:

—

2.

ՂԱՐՈՂԷ ԽՈՒՆԱԼՈՅ: (ԺԵ)

Ի հրոյ սիրոյդ վառեալ հոգիս՝ վառի ե ոչ հովանայ
Հառաչելով յարակ ողբայ ե ոչ այնու զովանայ
Գետք արտասուացս իջեալ յաչս՝ այգուն այգուն ծո-
վանայ՝

Իմ աննրման վարդ վարդ.
Պարծանք գարնան վարդ վարդ.

Մատիր առ իս.
Միտ գիր բանիս.
Եւ հայեաց յիս.
Տես թէ զիս քիզ կիզանիմ:

Ազգըք մարդկան ըզքեզ փունջ փունջ քաղեալ
ընծայ տանէին.
Ի բաղմոցի եղեալ պատուով յամենասուրբ տանէին.

Որոց առեալ զհօտգ անոյշ՝ միշտ ըզփառս տանէին.
Իմ աննրման . . .

Ընդ տես քոյին ուրախանան ամէն թոշունքն
օգային.

Եւ ճախր առեալ ի վեր ի վայր՝ հանգիստակէս
գումարին.

Քե բուրաստանք ե անգաստանք՝ գեղեցկացեալ
զարգարին.

Իմ աննրման . . .

Հառաչելով աղաչելով ձայնիւ մաղթեմ լալագին.
Ըզգուշացիր յորժամ հընչէ՛ զըժեռեալ(յ) հոգմըն
սաստկագին.

Մինչ դու թափիս՝ ես մեռանիմ՝ մի է իմ ե քո
հոգին.

Իմ աննրման . . .

Սիրահարեալս ի վերայ քո՝ փըշովք լեզուաց
խոցոտիմ:

Վիրօք լըցեալ ի բաց կացեալ ե ի հեռուստ կող-
կողիմ.

Քեզ կարօտիմ ե կարօտով՝ այնու յաւէտ տօշորիմ:
Իմ աննրման . . .

Ցաւօք նեղիմ հաշիմ մաշիմ՝ տարակուսեալ մոր-
մօքիմ.

Յերկանց մահու շրջապատեալ՝ հրով սիրոյդ բոր-
բօքիմ.

Ի տապտապիլս քոյդ կարօտով՝ խոր ծարաւմամբ
ծործորիմ.

Իմ աննրման . . .

Տերեալթափ սաստիկ հոգմըն՝ մինչ գայ առ
քեզ հասանի.

Ի յերկիւղէ բոլոր անձն իմ՝ զարհուրեցեալ
սասանի.

Ցաւքն յամենուստ ի վերայ իմ՝ տեղաց որպէս
հոսանի.

Իմ աննրման . . .

Ահա մի օրինակ Ղափանցու սիրային երգերից, որի
բանաստեղծական ձևի տակ թաղնուած է այրող ե
կիզիչ սէրը, որի առարկան բանաստեղծը Ղարդ է
անուանել, սակայն ո՞վ չի նկատում, որ այդ մի ձև
է, մի այլաբանութիւն է միայն:

Նշքան գեղեցկ է ասում. «Մի է իմ ե
քո հոգին»:

Յառաջ բերենք ե մի օրինակ Ղափանցու աշ-
խարհաբար կամ ինչպէս ինքն է ասում. «պարզ
բանի» գրուած երգերից, որի մէջ նրա աւելն
ու արուեստը մի անգամից են երևում:

3.

Չլլարդէ եւ զլուսնահատոյնս պարզ քանիւ:
(ԺԷ).

Ծիւ ծիւ սսկի է վարդի թերթերըն

Որպէս և ասնն նախնի ծերերըն.

Ահա մերձեցաւ գարնան ջ(և)րերըն՝ անոյշ օրերն.

Դեղգեղեալ գոչէ կանչէ հառաչէ՝ պիւլպիւլն երա-
մով իւրով.

Զայլ չայ թեւերն ի տէր տարածեալ.

Ողբով և սրգով չեղև շատացեալ.

Ի վերայ վարդին կարօտահարեալ՝

Եւ սիրով վառեալ գեղգեղեալ . . .

Ծայլ ծայլ թերթերու վարդին թերարաց.

Հեղու զարտասուս նրման աղբերաց.

Նընջել և հանգչիլ նա ըստ օրինաց՝

Երբէք ոչ գիտաց. գեղ՛ . . .

Քիւ Քիւ քայլելով և ոստոսելով.

Հուրջ զվարդենեօք շրջի ողբալով.

Ի ծագել լուսնոյն երկն յօրինելով

Քաջ յարմարելով գեղ՛.

Զիլ չիլ երամոց սոխակաց հաւուց.

Եհաս հովանի ի յոստոց թաւուց.

Դաշտք նրմանեցան բարերբեր նաւուց՝

Ի թեմն հովուց. գեղ՛ . . .

Զիլ զիլ ձայներով համեղ տաղերով.

Դինին սառուցէք փայլուն պաղերով.

Վարդըն փնջեցէք թօփ թօփ շաղերով.

Պուտ պուտ ցօղերով. գեղ՛.

Դիլ զիլ վայրերըն և լիլ լիլ տեղիք.

Դաշտք առապարք բըլուրք և հովիտք.

Զարդարեալ ցնծան և համայն լերինք.

Ներքինք և վերինք գեղ՛ . . .

Քոյ բոյ վարդենեաց ի յոստոց ծայրէ

Ծուլ ծուլ թըռչոտի ի վայր ի վայրէ.

Գոյ ցոյ արտասուօք ըզսիրան իւր այրէ՝

Ի փըշուտ վայրէ. գեղ՛ . . .

* *

Այս երեք օրինակով շատացանք առ այժմ մի
այլ առթի թողնելով Ղափանցու բոլոր տաղերի
հրատարակութիւնը, որոնց ամենի մէջ անխտիր
փայլում է բանաստեղծական կայծն ու տաղաչափա-
կան արուեստը. Այս արուեստը, որին երգիչը յա-
ճախ զօհում է և ներքին գեղեցկութիւնը, ժառան-
գութիւն է մեր միջնադարեան բանաստեղծների
համար. Այս ժառանգութեան մէջ շատ բան կայ օ-
տարածին և օտարամուտ, որ երբեմն կաշկանդել է

հանճարեղ երգիչներին ու խանգարել նրանց թռիչք-
ներին. Արուեստի այս կապող ու կաշկանդող ազդե-
ցութեան պէտք է վերադրել և այն աւելորդ ու ան-
յաջող տողերը ու յաճախ խանգարում են բանաս-
տեղծութեան ամբողջութիւնը.

Ն. Զարամեանց.



ԱՌԱՃՆՆԵՐ ՎԱՆԱՅ ԲԱՐԲԱՌՈՎ

Ան կիբիբայ (կիբա),

Գամ խելացղ վրայ.

Դու արբի որ, ես քե կերայ:

Աղէկ մանած էմէր,

Ուր խօր պատից կախած կեմէր:

Անխամ խաբս խէրանց,

Անխամ փեսան աներանց:

Ապրայ արկնման,

Մեռայ մահն էման:

Արծու չէման,

Մկան աւիրած:

Արջ երկու աղբոր մօտէն կը վախնայ:

Բարդի ծառը կերթայ կուգայ սիրոյ տէր ի,
Ուտի ծառը կերթայ կուգայ դարտի տէր ի է:

Գարեկաց ցածրացաւ,

Կորեկ խաց բանցրացաւ:

Դանկով զարկիմ,

Բամբկով կալիմ:

Դիւուն դժոխք շանց չտաս՝

Արցայութենի շտիրանար:

Ես զովվաթ գլուխ ի,

Ես անծեղ ջանդակս ի:

Ես քե մեռնիմ Վանայ լուսին,

Հեմ բոլոր ի, հեմ բեղ բեղ ի,

Քամբախ էղնի Ծատիսու լուսիկ

Հեմ ուղտտիկ ի, հեմ ծըծիկ ի,

Հեմ անլուսիկ ի:

Զարկիմ լանկայ, ազացի,

Ընկանց կատայ փորմանք),

Էմնուն ծով ի,

Վըր ձիկ սով ի:

Ըն աղուէս ի,

Ես էլ պոչ իմ:

Ըշ քրթեցին, պոչէն խողովան:

Ըրէցն իթող մօլէն ապով,

Մօլէն իթող նրէցն ապով,

Կուցիսան խոզով մարմնով.

Սեար սապիպ (պատճառը) մէկ մէկ ապով:

Ըրկնուց ցող առնի,

Գեմնուց պտուղ:

Ժածիկ, խորեմ քեօ մօր բածիկ:

Իմ խէրանց տուն չէն էղնի, կեր ու կործ.

Քամբախ էղնի կեսրանց տուն, կեր ու լուաց:

Իմնը կէր, մէկ էլ տաս.

Կօ նոր էկաւ մեր ծուռ խաբս:

Ս. Հայկունի.